



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն 3-Ա

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԺԵՆՅԱ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ, ՍՅՈՒՋԱՆՆԱ
ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԱԼԼԱ
ՔՅՈՒՐՔՉՅԱՆԻՆ, ԱՆԻ ԵՐԻՋԱՆՅԱՆԻՆ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԱՐՏՈՒՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ԳՈՒՐԳԵՆ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ, ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՋՈՐԻ
ՄԱՐԶԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՄԻՔԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ, ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ ՆԱՐԻՆԵ ԱՆԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԷԴԳԱՐ ՄԱՆԱՍՅԱՆԻՆ
ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը, Հանրապետության նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ ՆՀ-374-Ա, թիվ ՆՀ-375-Ա, թիվ ՆՀ-376-Ա, թիվ ՆՀ-377-Ա, թիվ ՆՀ-378-Ա, թիվ ՆՀ-379-Ա, թիվ ՆՀ-380-Ա, թիվ ՆՀ-381-Ա, թիվ ՆՀ-382-Ա, թիվ ՆՀ-383-Ա և թիվ ՆՀ-384-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետով և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Ժենյա Նազարյանին, Սյուզաննա Պողոսյանին, Գոհար Գրիգորյանին, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Ալլա Քյուրքչյանին, Անի Երիջանյանին, Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Արտուր Հարությունյանին, Գուրգեն Քոթանջյանին, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Միքայել Գրիգորյանին, Գոհար Կոստանյանին, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նարինե Անանյանին և Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդգար Մանասյանին տրամադրել իրենց անվամբ կնիքներ:

Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

**2022թ. դեկտեմբերի 21
ք. Երևան**